# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆ

«10» 12 2018 թ. Թիվ 203-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 18-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Հարցաշարը բաղկացած է երկու հարյուր երեսուն հարցից, որոնք ընդգրկում են հետևյալ բնագավառները՝

1) կրիմինալիստիկա՝ հիսուն հարց,

2) Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք՝ հարյուր հարց,

3) Հայաստանի Հանրապետության քրեադատավարական իրավունք՝ ութսուն հարց:».

2) 18-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կրիմինալիստիկա՝ մեկ հարց,

2) Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք՝ մեկ հարց,

3) Հայաստանի Հանրապետության քրեադատավարական իրավունք՝ մեկ հարց:»:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, մարմինների և ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչության պետին:

Հ. Գրիգորյան